

- 3.2.3. Զօգտագործել քարտը որևէ անօրինական նպատակով. ներառյալ այն ապրանքների կամ ծառայությունների ձեռք բերումը, որոնց վաճառքը կամ մատուցումը արգելված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
- 3.2.4. Վճարել Բանկին քարտային հաշվի սպասարկման միջնորդավճարը, ինչպես նաև սույն պայմանագրով նախատեսված այլ միջնորդավճարներ՝ Բանկի գործող սակագների եւ VISA կամ MasterCard վճարային համակարգերի Կանոնների համաձայն:
- 3.2.5. Մարել Քարտային հաշվին առաջացած բացասական մնացորդի (օվերդրաֆտի) եւ ժամկետանց այլ պարտավորությունների գումարները եւ դրանց գծով հաշվարկված տույժերը՝ անմիջապես պարտքերի առաջացումից հետո:
- 3.2.6. Իր ակտիվներով, իրեն պատկանող ամբողջ գույքով, ունեցվածքով, հիմնական, շրջանառու եւ Բանկում, կամ այլ բանկերում բացված հաշիվներում առկա դրամական միջոցներով Բանկի առջև պատասխանատվություն կրել տրամադրված վարկի, եւ/կամ առաջացած բացասական մնացորդի (օվերդրաֆտի) գումարի, դրանց վրա կուտակված տոկոսների ու տույժերի եւ այդ պարտքերը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերի եւ Բանկի կրած այլ վնասների չափով:
- 3.2.7. Հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնել Բանկին «Վճարային քարտերի տրամադրման դիմումի» մեջ նշված տվյալների փոփոխության դեպքում:
- 3.2.8. Բանկի պահանջով ներկայացնել քարտային հաշվով կատարված գործառնությունների, քարտային հաշվին մուտքագրված գումարների ծագման օրինակառություն եւ իսկական պատկանելիության մասին անհրաժեշտ գրավոր բացատրություններ եւ պարզաբանումներ:
- 3.2.9. Վերադարձնել Քարտը Բանկին գործողության ժամկետի ավարտից հետո, տաս օրվա ընթացքում:
- 3.3. Բանկն իրավունք ունի.
- 3.3.1. Հաճախորդի կամ նրա լիազորված անձանց կողմից սույն պայմանագրի պայմանների (այդ թվում սույն պայմանագրի 3.2.4. կետի) եւ/կամ Կանոնների խախտման դեպքում սառեցնել, կամ դադարեցնել Քարտի (լրացուցիչ քարտի) գործողությունը՝ Քարտը VISA կամ MasterCard վճարային համակարգերի STOP-ցուցակում գրանցելու միջոցով: Վերջինիս հետ կապված բոլոր ծախսերը գանձվում են Հաճախորդից:
- 3.3.2. Չակտիվացնել քարտային հաշվին մուտքագրված գումարները, եթե պատշաճորեն չի բացահայտվել, եւ/կամ Բանկի պահանջով չեն տրամադրվել այդ գումարների իսկական պատկանելիության հիմքերը, կամ չի հիմնավորվել դրանց ծագման օրինակառությունը:
- 3.3.3. Միակողմանիորեն փոփոխել Բանկի գործող սակագները եւ Կանոնները՝ տեղեկացնելով այդ մասին Բանկում տեղադրված լրատվական ստենդերի եւ Բանկի ինտերնետ կայքի միջոցով:
- 3.3.4. Քարտային հաշվից անվերապահորեն գանձել Հաճախորդի Քարտով, կամ նրա լիազորված անձանց կողմից լրացուցիչ քարտերով կատարած գործարքների գումարները (այդ թվում նաև թույլ տրված օվերդրաֆտի գումարը), ինչպես նաև քարտային հաշվի սպասարկման եւ գործարքների իրականացման համար Բանկի գործող սակագներով եւ VISA կամ MasterCard վճարային համակարգերի կանոններով սահմանված միջնորդավճարները:
- 3.3.5. Հաճախորդի կողմից Բանկի հանդեպ ունեցած պարտավորությունները չկատարելու դեպքում անվերապահորեն գանձել առաջացած պարտավորությունների գումարները Բանկում, ինչպես նաև այլ բանկերում Հաճախորդի ունեցած հաշիվներից, կամ նշված գումարները բռնագանձել դատական ատյանների միջոցով՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 3.3.6. Մերժել Հաճախորդին (նրա վստահած անձանց) Քարտի տրամադրման, կամ Քարտի (լրացուցիչ քարտի) գործողության վերականգնման համար՝ առանց պատճառների բացատրման:
- 3.4. Բանկը պարտավոր է.
- 3.4.1. Սպահովել քարտային հաշվի սպասարկումը ՀՀ գործող օրենսդրության համաձայն եւ Քարտի սպասարկումը՝ VISA կամ MasterCard վճարային համակարգերի ստանդարտներին համապատասխան:
- 3.4.2. Հաշվարկել տոկոսավճարներ քարտային հաշվի մնացորդի վրա՝ Բանկի գործող սակագներով նախատեսված տոկոսադրույքով եւ ժամկետներով:
- 3.4.3. Տրամադրել Հաճախորդին քարտային հաշվի ամենամսյա քաղվածք՝ համաձայն պայմանագրի 6. կետի:
- 3.4.4. Հաճախորդի պահանջով տրամադրել նրան քարտային հաշվի լրացուցիչ քաղվածք՝ նշված ժամանակահատվածի համար, գանձելով Բանկի գործող սակագներով սահմանված միջնորդավճարը:
- 3.4.5. Հաճախորդին տրամադրել «Վճարային քարտերի օգտագործման կանոնները»:
- 3.4.6. Հաճախորդի (լիազորված անձանց) կողմից քաղվածքում նշված գործարքների հետ անհամաձայնության դեպքում իրականացնել աշխատանքներ այդպիսի վիճարկելի գործարքների պարզաբանման համար՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության եւ VISA կամ MasterCard վճարային համակարգերի կանոնների:

4. ՀԱՏՈՒՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

- 4.1. Լիազորված անձին լրացուցիչ քարտի տրամադրման համար Հաճախորդը տվյալ անձի անունով ձեռագրելով եւ լիազորագիր իր քարտային հաշվի տնօրինման վերաբերյալ եւ լրացնում է լիազորված անձի վերաբերյալ անհրաժեշտ տվյալները «Լրացուցիչ քարտի տրամադրման դիմումի» մեջ: Յուրաքանչյուր ձեռագրված լրացուցիչ քարտի համար Հաճախորդը պետք է կատարի մուծում լրացուցիչ քարտի տրամադրման եւ սպասարկման համար՝ համաձայն Բանկի գործող սակագների:

- 4.2. Բանկը իր ներքին իրավական ակտերին համապատասխան որոշված էական պայմաններով (գումար, ժամկետ, տոկոսադրույք եւ այլն), Հաճախորդի դիմումի համաձայն, Հաճախորդի քարտային հաշվին կարող է տրամադրել վարկային սահմանաչափ: Վարկային սահմանաչափը Բանկի կողմից տրամադրվում է կամ տրամադրումը մերժվում է հաճախորդի կողմից բանկին ներկայացված սահմանված ձեռքի դիմումի, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում Բանկի պահանջով այլ փաստաթղթերի հիման վրա: Ընդ որում, Բանկը կարող է մերժել հաճախորդի դիմումը առանց որևէ պատճառաբանության:
- 4.3. Վարկային սահմանաչափի առավելագույն ժամկետը չպետք է գերազանցի վճարային քարտի գործողության ժամկետը, իսկ տրամադրվող վարկային սահմանաչափի էական պայմանները՝ գումարը, ժամկետը, տոկոսադրույքը եւ այլն, սահմանվում է Բանկի ներքին իրավական ակտերին համապատասխան, Հաճախորդի կողմից լրացված դիմումի հիման վրա:
- 4.4. Առանձին դեպքերում, ելնելով Հաճախորդի անձից, քարտային հաշվի ակտիվ շրջանառությունից, դրական վարկային պատմությունից, գործարար համբավից եւ այլ հանգամանքներից, Բանկը կարող է քարտային հաշվին վարկային սահմանաչափ տրամադրել միակողմանիորեն, Բանկի կողմից սահմանված պայմաններով (առավելագույն սահմանաչափ, տոկոսադրույք, ժամկետ եւ այլն), առանց Հաճախորդի կողմից գրավոր դիմումի ներկայացման: Նշված վարկային սահմանաչափի առաջարկը (օվերդրաֆտ) Հաճախորդի կողմից օգտագործելը նշանակում է առաջարկի ընդունում (ակցեպտ) եւ վարկային պայմանագրի կնքում, անկախ թղթային բաղադրյալից:
- 4.5. Տրամադրված վարկը սահմանված ժամկետում չմարելու դեպքում Բանկի կողմից նախատեսված տոկոսադրույքի հաշվարկումը դադարում է եւ ժամկետանց վարկի մնացորդի նկատմամբ կետանցի օրվանից մինչև վարկի լրիվ մարման օրը, սկսում են հաշվարկվել տոկոսներ ըստ համապատասխան ժամանակահատվածների դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքների:
- 4.6. Տրամադրված վարկը սահմանված ժամկետում չմարելու դեպքում, ուշացման յուրաքանչյուր օրվա համար Հաճախորդը Բանկին վճարում է տույժ՝ ժամկետանց վարկի մնացորդի նկատմամբ տարեկան 27(Քսանյոթ) տոկոս տոկոսադրույքով:
- 4.7. Հաճախորդի քարտային հաշվի բացասական մնացորդ (օվերդրաֆտ) եւ/կամ Բանկի կողմից տրամադրված վարկի ժամկետանց տոկոսային պարտավորություններ առաջանալու դեպքում Բանկը պարտքի դիմաց, առաջացման օրից մինչև մարման օրը ընկած ժամանակահատվածի համար, հաշվարկում է տույժ՝ օրական 0,1(Ձրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:
- 4.8. Կողմերը ընդունում են Քարտով կատարված գործարքների վերաբերյալ VISA կամ MasterCard վճարային համակարգերի կողմից էլեկտրոնային ճանապարհով ստացված տվյալները, որպես իրավական հիմք՝ Հաճախորդի քարտային հաշվի համապատասխան գործարքների իրականացման համար:
- 4.9. Այլ բանկի սպասարկման կետում (բանկոմատ, կանխիկացման կետ, ՊՕՍ-տերմինալ եւ այլն) իրականացված գործարքի դեպքում Հաճախորդի քարտային հաշվից գանձվում է VISA կամ MasterCard վճարային համակարգերից ստացված տվյալ գործարքի ԱՄՆ դոլարով կամ Եվրոյով արտահայտված փոխհաշվարկի գումարը՝ արտահայտված քարտային հաշվի արժույթի բանկի կողմից սահմանված փոխարժեքով:
- 4.10. Քարտային հաշվի քաղվածքում արտացոլված գործարքների հետ անհամաձայնության դեպքում, Հաճախորդը պետք է գրավոր դիմի Բանկին գործարքի իրականացումից 45(Քառասունհինգ) օրվա ընթացքում: Հաճախորդը կարող է դիմումին կցել վիճարկելի գործարքի գումարի չափը հաստատող ցանկացած փաստաթուղթ: Նշված ժամկետում քաղվածքում նշված գործարքների վերաբերյալ Հաճախորդի կողմից առարկությունների բացակայության դեպքում, բոլոր գործարքները համարվում են իրականացված: Հաճախորդի կողմից առարկությունները սահմանված ժամկետից ուշ Բանկ ներկայացնելու դեպքում Բանկը պատասխանատու չէ քաղվածքում արտացոլված գործարքների իսկության համար: Բանկը պատասխանատվություն չի կրում Հաճախորդի կողմից իր քարտային հաշվի ամենամյա քաղվածքը ստանալու խնդրանքով Բանկին ոչ ժամանակին դիմելու համար:
- 4.11. Վիճարկելի հարցերի լուծման միջոց է հանդիսանում VISA կամ MasterCard վճարային համակարգերից ստացված պատասխան էլեկտրոնային հաղորդագրությունը, որը Բանկն իր հերթին թղթային ձևով տրամադրում է Հաճախորդին: Հաճախորդի պահանջով, Բանկը տրամադրում է գործարքի իսկությունը հաստատող փաստաթուղթ՝ գանձելով այդ ծառայության համար Բանկի գործող սակագներով սահմանված միջնորդավճարը:
- 4.12. Հաճախորդի (լիազորված անձանց) կողմից վիճարկված գործարքի գումարը մուտքագրվում է քարտային հաշվին VISA կամ MasterCard վճարային համակարգերից ստացված տվյալ գործարքը հաստատող գումարի չափով:
- 4.13. Այն դեպքում, երբ Կողմերին չի հաջողվում լուծել վիճարկելի հարցերը բանակցությունների միջոցով, ապա նման հարցերը ենթակա են լուծման դատական կարգով՝ համաձայն ՀՀ օրենսդրության:
- 4.14. Հաճախորդի քարտային հաշվին կարող են մուտքագրվել ստացված անկանխիկ միջոցներ՝ միայն ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:
- 4.15. Քարտի գործողության ժամկետի ավարտման կամ վաղաժամկետ փակման դեպքում քարտային հաշվի մնացորդը Հաճախորդին վերադարձվում է Քարտի փակումից մեկ ամիս հետո:
- 4.16. Քարտային հաշվին մուտքագրված միջոցները Քարտով գործարքներ կատարելու համար հասանելի են դառնում միջոցների մուտքագրման օրը, Երեւանի ժամանակով 19:00-ից հետո:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

- 5.1. Հաճախորդը կրում է պատասխանատվություն «Վճարային քարտերի տրամադրման դիմումի» մեջ ներկայացված տվյալների ճշտության համար:
- 5.2. Հաճախորդը կրում է անհատական պատասխանատվություն լիազորված անձանց կողմից Կանոնների պահպանման համար:

- 5.3. Հաճախորդի կողմից թույլ տված օվերդրաֆտի գումարը՝ հաշվարկված տույժի հետ միասին, ինչպես նաև սույն պայմանագրի պայմանների եւ Կանոնների խախտման հետեւանքով Հաճախորդի (լիազորված անձի) կողմից Բանկին հասցված վնասները ամբողջությամբ ենթակա են հատուցման Հաճախորդի քարտային հաշվից, իսկ հաշվի մնացորդի անբավարար լինելու դեպքում Բանկում Հաճախորդին պատկանող այլ հաշիվներից: Վերոհիշյալ գանձման անհնարինության դեպքում Հաճախորդը կրում է պատասխանատվություն ՀՀ գործող օրենսդրության համաձայն:
- 5.4. Բանկը երաշխավորում է քարտային հաշվի, նրա միջոցով կատարվող գործարքների եւ Հաճախորդի վերաբերյալ տվյալների գաղտնիության պահպանումը: Բանկային գաղտնիք հանդիսացող տվյալները կարող են տրամադրվել միայն Հաճախորդին, նրա ներկայացուցչին, ինչպես նաև Պետական մարմիններին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:
- 5.5. Բանկը չի կրում պատասխանատվություն իրենից անկախ պատճառներով Հաճախորդի գործարքների մերժման համար:

6. ՀԱՇՎԻ ՔԱՂՎԱԾՔԸ ԵՎ ԱՅՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

- 6.1. Բացառությամբ Պայմանագրի 6.2 կետով նախատեսված դեպքի, Բանկը պարտավորվում է առնվազն երեսուրյա պարբերականությամբ Հաճախորդին տրամադրել Հաճախորդի՝ Բանկում առկա յուրաքանչյուր հաշվի վերաբերյալ հաշվի քաղվածք, որում ներկայացվում են՝
- 1) յուրաքանչյուր օրվա կտրվածքով հաշվի դեբետագրումները, կրեդիտագրումները և հաշվի մնացորդը.
 - 2) վաստակած տարեկան տոկոսային եկամտաբերության չափը.
 - 3) ստացված տոկոսի գումարը.
 - 4) գանձված սակագները և տուժանքները.
 - 5) հաշվետու ժամանակաշրջանի օրերի քանակը:
- Հաշվի դեբետը և կրեդիտը հաստատող նշումով հաշվի քաղվածքին կից փաստաթղթերը, ինչպես նաև այլ փաստաթղթերը վավերացվում են Բանկի դրոշմակնիքով, այդ թվում էլեկտրոնային միջոցով կատարվածները:
- 6.2. Բանկը պարտավոր չէ Հաճախորդին հաշվի քաղվածք տրամադրել, եթե հաշվետու ժամանակաշրջանում Բանկը սույն հաշիվը չի դեբետագրել կամ կրեդիտագրել:
- 6.3. Հաճախորդի պահանջով Բանկը պարտավորվում է հնգօրյա ժամկետում Հաճախորդին տրամադրել՝ Բանկում առկա հաշվի վերաբերյալ հաշվի քաղվածք՝ Բանկի սահմանած սակագներով:
- 6.4. Հաշվի քաղվածքները Հաճախորդին տրամադրվում են գրավոր եղանակով՝ Պայմանագրով կամ դիմումում նշված հասցեով Հաճախորդին պատվիրված փոստային նամակ ուղարկելու միջոցով, բացառությամբ այն դեպքի, երբ Հաճախորդն իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա հրաժարվել է հաշվի քաղվածքները փոստային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ հաշվի քաղվածքները էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով կամ Բանկի տարածքում առձեռն ստանալու պայմանով:
- 6.5. Հաշվի քաղվածքը Բանկի տարածքում Հաճախորդին առձեռն տրամադրվում է անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում: Հաշվի քաղվածքը Բանկի տարածքում կարող է առձեռն տրամադրվել նաև Հաճախորդի լիազորված անձին, լիազորված անձի անձը հաստատող փաստաթղթի և Բանկի ներքին իրավական ակտերով պահանջվող ձևով կազմված լիազորագրի առկայության դեպքում:
- 6.6. Հաշվի քաղվածքը Բանկի տարածքում առձեռն ստանալուց Հաճախորդն հաշվի քաղվածքներից Բանկի օրինակի վրա կատարում է ձեռագրով նշագրում՝ «Ստացա քաղվածքի մեկ օրինակը» և ստորագրում:
- 6.7. Եթե Հաշվի քաղվածքները Հաճախորդին առձեռն են հանձնվում Բանկի տարածքում, ապա Բանկը պարտավորվում է առնվազն 3 տարի պահպանել Հաճախորդի կողմից չպահանջված Հաշվի քաղվածքները:

7. ԲԱՆԿԻ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀՍՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ

- 7.1. Բանկի և Հաճախորդի միջև ցանկացած հաղորդակցում, որը կապված է Պայմանագրի պայմանների կամ Կողմերի միջև հաղորդակցման կարգի կամ Կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման հետ կամ վերաբերում է Պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող օրենքներին, նորմատիվ իրավական ակտերին կամ Բանկի ներքին իրավական ակտերին, կատարվում է գրավոր եղանակով՝ փոստային կապի միջոցով, բացառությամբ Պայմանագրի 7.2. կետում նշված դեպքերի: Ընդ որում, սույն կետում նշված տեղեկատվությունը համարվում է Բանկի կողմից պարտադիր ներկայացման տեղեկատվություն:
- 7.2. Հաճախորդն իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա կարող է հրաժարվել Պայմանագրի 7.1. կետով սահմանված տեղեկատվությունը փոստային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ պարտադիր ներկայացման տեղեկատվությունը էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով կամ Բանկի տարածքում առձեռն ստանալու պայմանով:
- 7.3. Եթե պարտադիր ներկայացման տեղեկատվությունը Հաճախորդին առձեռն է հանձնվում Բանկի տարածքում, ապա Բանկը պարտավորվում է առնվազն 3 տարի էլեկտրոնային կամ թղթային կրիչի վրա պահպանել Հաճախորդի կողմից չպահանջված տեղեկատվությունը:
- 7.4. Պարտադիր ներկայացման տեղեկատվությունը Բանկի տարածքում առձեռն ստանալուց Հաճախորդը՝ տրամադրվող տեղեկատվությունից Բանկի օրինակի վրա ձեռագրով կատարում է նշագրում «Ստացա մեկ օրինակը» և ստորագրում:
- 7.5. Պայմանագրի պայմանների կամ Կողմերի իրավունքների, պարտականությունների կամ պատասխանատվության սահմանման, փոփոխման կամ դադարեցման կամ Պայմանագրի վրա որևէ ազդեցություն ունեցող Բանկի ներքին իրավական ակտերի փոփոխման դեպքում, որը հանգեցնում է տարեկան տոկոսային եկամտաբերության

փոփոխման, Բանկը պարտավորվում է սույն գլխով սահմանված կարգով տեղեկացնել Հաճախորդին նոր պայմանների վերաբերյալ՝ տարեկան տոկոսային եկամտաբերության փոփոխման օրվանից առնվազն 15 օր առաջ: Ընդ որում, Հաճախորդը ծանոթացել է Պայմանագրի այս տիպի համար Բանկի կողմից հաստատված սակագների, տոկոսադրույքների, տարեկան տոկոսային եկամտաբերության, տույժերի և դրամական միջոցների ներգրավման կարգի և պայմանների, քարտային հաշվին վարկային սահմանաչափ (վարկ) տրամադրելու դեպքում դրա էական պայմանների(առավելագույն գումար, ժամկետ, տոկոսադրույք, տուժանք և այլն), սակագներով սահմանված քարտային հաշվի չնվազող մնացորդի, քարտային հաշվի տարեկան սպասարկման, քարտի և լրացուցիչ քարտի թողարկման դիմաց սահմանված միջնորդավճարի վերաբերյալ տեղեկատվական ամփոփագրին և համաձայնելով դրանց հետ՝ կնքել սույն Պայմանագիրը:

7.6. Պայմանագրով Հաճախորդին տրամադրված Քարտի գործողության ժամկետը լրանալուց և Հաճախորդի կողմից նոր Քարտ չստանալուց հետո, Քարտին կից հաշվում առկա գումարների վրա տարածվում է տվյալ պահին Բանկում գործող բանկային հաշվի սպասարկման իրավական ռեժիմը, և կողմերի իրավահարաբերությունները կարգավորվելու է Բանկի ներքին իրավական ակտերով և սակագներով սահմանված կանոններով: Ընդ, որում Հաճախորդը սույնով հավաստում է, որ Պայմանագիրը կնքելիս ինքը ստացել է տեղեկատվական ամփոփագիրը, ծանոթացել է Բանկի կողմից ավանդների ընդունման պայմաններին, բանկային հաշվի սպասարկման սակագներին, ընդունում է դրանք և պարտավորվում է կատարել դրանցով նախատեսված պահանջները:

Պայմանագրով Հաճախորդին տրամադրված Քարտի գործողության ժամկետը լրանալու և Հաճախորդի կողմից նոր Քարտ չստանալու դեպքում, Քարտին կից հաշվում առկա, Հաճախորդի կողմից չպահանջված գումարները բանկային հաշվին փոխանցելուց հետո, Բանկն իրավունք անվիճելի կարգով գանձել սահմանված ժամկետում բանկային հաշվի սպասարկման համար նախատեսված վճարումները՝ տվյալ պահին Բանկում գործող սակագներին համապատասխան:

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ԱՅՆ ԼՈՒԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ

- 8.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում նրա ստորագրման պահից եւ գործում է անժամկետ:
- 8.2. Սույն պայմանագիրը կարող է լուծվել Կողմերից մեկի նախաձեռնությամբ համաձայն ՀՀ գործող օրենսդրության և պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների լիակատար իրականացման դեպքում:
- 8.3. Սեփական նախաձեռնությամբ պայմանագիրը լուծելու համար, Հաճախորդը պարտավոր է Բանկ ներկայացնել գրավոր դիմում, հանձնել իր եւ իր կողմից լիազորված անձանց քարտերը ոչ ուշ, քան պայմանագիրը չեղյալ համարելու օրվանից 45(Քառասունհինգ) օր առաջ՝ կատարելով իր բոլոր պարտավորությունները Բանկի հանդեպ:
- 8.4. Պայմանագիրը լուծելու պահին վիճելի գործարքների առկայության դեպքում Բանկը իրավասու է հետաձգել վիճարկելի գումարների վերադարձը VISA կամ MasterCard վճարային համակարգերի Կանոններով սահմանված ժամկետով, որն անհրաժեշտ է այդ գործարքների վերջնական պարզաբանման համար:
- 8.5. Պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում Բանկը չի վերադարձնում քարտային հաշվի սպասարկման, Քարտի (լրացուցիչ քարտի) տրամադրման համար գանձված միջնորդավճարները:
- 8.6. Հաճախորդի՝ օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված իրավունքները ենթակա են պաշտպանության դատական կարգով, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ արբիտրաժային կարգով, ինչպես նաև Ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԱՆԿ
ՀԱՃԱԽՈՐԴ

«ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ
 ք.Երևան 0010, Մհեր Մկրտչյան 12
Հեռ. (374 10) 541772
 AMD Կենտրոնական բանկ
 թ/հ 103002102384

Հասցե՝ _____

Գլխավոր տնօրեն՝

Հեռախոս՝ _____

_____ Ա. Շ. Խանդկարյան

անձնագիր՝ _____

Կ.Տ.

 (ստորագրություն)

Ծ Ա Ն ՈՒ Ց ՈՒ Մ

Ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին

ՀԱՐԳԵԼԻ ԱՎԱՆԴԱՏՈՒ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Խնդրում ենք մինչև ավանդային պայմանագիրը ստորագրելը ծանոթանալ սույն փաստաթղթի դրույթներին:

Ձեր ավանդի հատուցման երաշխավորողն է **Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամը** (այսուհետև՝ Հիմնադրամ):

Հիմնադրամի գտնվելու վայրը՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 6,
 Հեռախոսը՝ 58-35-14, Ինտերնետային կայքը՝ www.adgf.am

Սույն ծանուցման բոլոր սահմանումները համապատասխանում են «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետև՝ Օրենք) սահմանումներին:

Հատուցման դեպքը

Ձեր երաշխավորված ավանդը ենթակա է հատուցման հետևյալ դեպքերում.

1. Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը ճանաչվում է անվճարունակ և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև՝ Կենտրոնական բանկ) խորհրդի որոշմամբ հաստատվում է բանկի կողմից օրենքով և պայմանագրերով սահմանված ժամկետներում ավանդները վերադարձնելն ի վիճակի չլինելու փաստը կամ

2. Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բանկը սնանկ է ճանաչվում (այսուհետև՝ անվճարունակ բանկ):

Երաշխավորված ավանդի առավելագույն չափը և հաշվարկման կարգը

Երաշխավորված ավանդների հաշվարկման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի օգոստոսի 26-ի թիվ 261-Ն որոշմամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ դրամային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների, և Ձեր՝ նույն բանկում ունեցած բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ արտարժույթային ավանդ, բացառությամբ չերաշխավորված ավանդների:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 2 միլիոն դրամից ավելի է	Եթե դրամային ավանդը 2 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	4 միլիոն ՀՀ դրամ	2 միլիոն ՀՀ դրամ	4 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	2 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ երկու միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

Եթե Դուք անվճարունակ բանկում ունեք առանձին բանկային ավանդ և մինչև նույն ժամանակ նույն բանկում ներդրված համատեղ բանկային ավանդի սեփականատեր եք, ապա երաշխավորվում է Ձեր առանձին բանկային ավանդի և համատեղ բանկային ավանդում Ձեր մասնաբաժնի հանրագումարը՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Եթե դուք անվճարունակ բանկի նկատմամբ ունեք պարտավորություն, ապա հատուցման ենթակա գումարը կհաշվարկվի Ձեր բանկային ավանդի և պարտավորության դրական տարբերության հիման վրա՝ Օրենքով սահմանված կարգով և չափով:

Երկու կամ ավելի ավանդատուների համատեղ բանկային ավանդը համարվում է յուրաքանչյուր անձի առանձին բանկային ավանդ, ավանդատուի՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով: Եթե պայմանագրով սահմանված չեն համատեղ բանկային ավանդի ավանդատուների մասնաբաժինները, ապա համատեղ բանկային ավանդն ավանդատուների միջև բաժանվում է հավասարաչափ:

Բանկային ավանդի հատուցումը կատարվում է միայն հայկական դրամով: Արտարժույթային բանկային ավանդի դրամական համարժեքությունը որոշվում է հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ Կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքով:

Ձեր բանկային ավանդը չի հատուցվում, եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ այդ ավանդը պակաս է 1000 հայկական դրամից:

Չերաշխավորված բանկային ավանդ

Ձեր բանկային ավանդը երաշխավորված չէ, եթե՝

ա) Դուք հանդիսանում եք տվյալ բանկի ղեկավար և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
 բ) Դուք հանդիսանում եք տվյալ բանկում նշանակալից մասնակցություն ունեցող անձ և (կամ) վերջինիս ընտանիքի անդամ,
 գ) Դուք, որպես ավանդի սեփականատեր (համասեփականատեր), հրաժարվել եք ավանդի՝ Ձեր մասի նկատմամբ սեփականության իրավունքից,


դ) Ձեր ավանդն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ճանաչվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված դրամական միջոց, քանի դեռ Դուք հակառակը չեք ապացուցել,

ե) Ձեր ավանդը տվյալ բանկում ներդրվել է բանկային ավանդի ներդրման պահին տվյալ բանկի կողմից հրապարակային պայմանագիր կնքելու առաջարկով նախատեսված նմանատիպ բանկային ավանդների տոկոսադրույթն առնվազն 1,5 անգամ գերազանցող տոկոսադրույթով,

զ) Ձեր ավանդը ներդրված է բանկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստեղծված մասնաճյուղերում:

Երաշխավորված ավանդների հատուցման կարգը և ժամկետները

Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում Հիմնադրամը հայտարարություն է հրապարակում հատուցման դեպքի մասին: Հատուցման դեպքի օրվան հաջորդող երեսներ ժամկետում Հիմնադրամը անվճարունակ բանկի կամ այլ բանկի միջոցով, սկսում է իրականացնել Ձեր ավանդների հատուցման գործընթացը: Գործընթացը սկսվում է զանգվածային լրատվական

	FO 75-25-03	Էջ 7 / 7
	Վճարային քարտերի տրամադրման, քարտային հաշվի բացման և սպասարկման վերաբերյալ պայմանագիր (ֆիզիկական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար)	Խմբագրություն 01

միջոցներում հատուցման վերաբերյալ Հիմնադրամի կողմից լրացուցիչ հայտարարություն հրապարակելու պահից: Դուք կարող եք գրավոր պահանջ ներկայացնել ոչ ուշ, քան հատուցման դեպքի օրվան հաջորդող մեկ տարվա ընթացքում: Նշված ժամկետում Ձեր կողմից գրավոր պահանջ չներկայացնելու դեպքում Հիմնադրամի կողմից Ձեր երաշխավորված ավանդի հատուցում չի իրականացվի: Հիմնադրամը պարտավոր է իրականացնել ավանդատուների պահանջներով հատուցումները՝ գրավոր պահանջը ներկայացնելու օրվան հաջորդող երեք ամիսների ընթացքում, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի:

Երաշխավորված ավանդի գումարի հատուցումից հետո անվճարունակ բանկի հանդեպ Ձեր ունեցած դրամական պահանջը՝ հատուցված գումարի չափով համարվում է բավարարված: Հատուցման չափը գերազանցող գումարը համարվում է անվճարունակ բանկի պարտավորությունը Ձեր նկատմամբ:

Ձեր բանկային ավանդը ներդրման պահին հանդիսանում է Օրենքով սահմանված չափով և կարգով՝

երաշխավորված ավանդ (այն համատեղ ավանդների դեպքում, որոնց համատեղ ավանդատուներից մեկի կամ մի քանիսի բանկային ավանդները երաշխավորված ավանդ չեն համարվում, նշել ավանդի ընդհանուր գումարի մեջ երաշխավորված մասը՝ տոկոսային արտահայտությամբ)

չերաշխավորված ավանդ

Ավանդատու՝

Անուն

Ազգանուն

Հայրանուն

Անձը հաստատող փաստաթղթի տվյալները

Ավանդային պայմանագրի համարը կամ այլ պարտավորության տվյալները

Ավանդատու.....

ստորագրություն

Բանկի գլխավոր տնօրեն կամ Բանկի կողմից լիազորված այլ անձ (վարչության նախագահ)

.....

ստորագրություն

Գ. Տ.

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ: Ձեր ավանդի հատուցումն առավել սահուն իրականացնելու նպատակով առաջարկում ենք ավանդի ներդրման ժամանակ Ձեր կողմից բանկին տրամադրված տվյալների (անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, սոցիալական ապահովության քարտի տվյալներ, հասցե, հեռախոսահամար և այլն) ցանկացած փոփոխության դեպքում այդ մասին անմիջապես տեղեկացնել բանկին: